ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/185 «08» 05 2026 թ.

«Ասպար Արմս» ՍՊ ընկերության տնօրեն
Ս. Մարգարյանին
(ՀՎՀՀ 00093802)
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան,Մամիկոնյանց 60/1,
էլ. հասցե՝ info@arms.am
Հեռ.՝ 010298889

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «Ասպար Արմս» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև 17 մարտի 2026 թվականին կնքված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-Ա-21/2026-9 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը պարտավոր էր մատակարարել, մասնավորապես՝

- 17-րդ չափաբաժնով՝ կիսավերարկու (499387.20 (չորս հարյուր իննսունինը հազար երեք հարյուր ութսունյոթ ամբողջ քսան լումա) ՀՀ դրամի չափով),
- 18-րդ չափաբաժնով՝ դիմակ (212496.00 (երկու հարյուր տասներկու հազար չորս հարյուր իննսունվեց) ՀՀ դրամի չափով),
- 19-րդ չափաբաժնով՝ կիսաճտքավոր կոշիկներ (3161820.00 (երեք միլիոն հարյուր վաթսունմեկ հազար ութ հարյուր քսան) ՀՀ դրամի չափով) :

«Ասպար Արմս» ՍՊ ընկերության կողմից ստացվել է գրություն, ըստ որի վերջինս հրաժարվում է մատակարարել Պայմանագրի 17-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքները, քանի որ էլեկտրոնային աճուրդի ժամանակ վերոնշյալ չափաբաժնի համար սխալմամբ նշել է ինքնարժեքից ցածր գին:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի այն է՝ «պայմանագիր կնքած անձի

(կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 7.11-րդ կետը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը միակողմանի մասնակի լուծում է ՀՀ ներքին գործերի նախարարության և «Ասպար Արմս» ՍՊ ընկերության միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-Ա-21/2026-9 ծածկագրով գնման Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի մասնակի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Ընկերությանը տրվում է 7 օրացուցային օր սահմանված տուգանքը 0.5% (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ 2,497 (երկու հազար չորս հարյուր իննսունյոթ) ՀՀ դրամը վճարելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով 17-րդ չափաբաժնի համար սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար՝ 793,500 (յոթ հարյուր իննսուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը և պայմանագրի ապահովման գումար՝ 529,000 (հինգ հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամը փոխանցելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխանաբար N 900008000698 և N 900008000664 հաշվեհամարներին:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, «Ասպար Արմս» ՍՊ ընկերության տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Պարտականությունները կատարող **Խ. Իգիթյան**

Ստորաբաժանում՝ Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ գլխավոր մասնագետ Ա. Աբասյան
Հեռախոս՝ 010 59 68 57